




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

359(տոմար)

Ե - 34

ՄՈՊՐԻ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ

ԿՈՎԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ



ԴԵՏՅՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1931

1 MAR 2010

05 APR 2013

ՅԵԳՈՐ

359 [unclear]

Ե-34

Այն

ՄՈԳՐԸ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՎԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ

1462



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

15615-52

1981

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ—ՅԵՐԿՈՒ ՍԻՍԵՄ

«Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, տնտեսական կրիզիս եւ և արտադրութեան անկում, ինչպես արդյունաբերութեան, այնպես եւ գյուղատնտեսութեան բնագավառում: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, տնտեսական վերելք եւ և արտադրութեան աճում ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագավառներում: Այնտեղ՝ կապիտալիստների մոտ՝ աշխատավորների նյութական դրութեան վատթարացում, բանվորների աշխատավարձի անկում եւ գործադրկութեան աճումն եւ տեղի ունենում: Մեզ մոտ ԽՍՀՄ-ում աշխատավորների նյութական վերելք, աշխատավարձի բարձրացում եւ գործադրկութեան կրճատումն եւ տեղի ունենում»:

Այս խոսքերով բնորոշեց ընկ. Ստալինը Համկոմ-կուսի (բ) 16-րդ համագումարում դրությունը կապիտալիստական յերկրներում եւ մեզ մոտ ԽՍՀՄ-ում: Համկոմկուսի 16-րդ համագումարից հետո ընկած ժամանակաընթացքում տեղի ունեցած պրոցեսները լիովին արդարացրին ընկ. Ստալինի այս յեղրակացությունը: Մինչդեռ կապիտալիստական աշխարհը զալարվում եւ և չի կարողանում դուրս գալ կրիզիսային այն դրությունից, վորի մեջ նա գտնվում եւ, Խորհրդային Միութեանը արձանագրելով խոշորագույն նվաճումներ ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագավառներում, աննա-

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ.

Քրառն. 6202 (բ). Հրատ. 1526. Պատվեր 900 Տիրամ 4000.

Խոշորագույն կենտրոնը ընթացում է սոցիալիզմի կառուցման ուղիներով:

Հնդամյակի 2-րդ տարում վոչ միայն կատարվեցին նախատեսված ծրագրերը, այլ և մի շարք հիմնական բնագավառներում ցուցանիշները գերազանցեցին, հակառակ աջ կապիտալիզմի և հակահեղափոխական տրոցկիստների ամենամոռաց զուլալությունների:

Հնդամյակի վերջում, ըստ ծրագրի, կոլտնտեսությունները պետք է կատարելին 20 միլիոն հեկտար ցանք: Արդեն այդ ծրագիրը վոչ միայն կատարվել, այլ և գերազանցեց: 20 միլիոն հեկտարի փոխարեն կոլտնտեսությունները տարածվել են 43 միլ. հեկտարի վրա: Արդյունաբերության բնագավառում մենք ունենք 30,5 միլիարդի արտադրանք 29,3 միլիարդ ո. արտադրանքի փոխարեն, վոր նախատեսվել էր հնդամյակի 2-րդ տարվա ծրագրով: Ծանր արդյունաբերությունը նույնպես գերազանցեց իր ծրագրերը: Սակայն սխալ կլիներ կարծել, վոր մեզնում չկան թերակատարումներ արդյունաբերության գծով: Ածխի, թուջի ասպարիզում մենք ունենք զգալի թերակատարում: Թերակատարում կա նաև բամբակադործական արդյունաբերության գրծով:

Սոցիալիզմի կառուցումը ընթանում է և ընթանալու յն դժվարությունների հաղթահարման հանապարհով, դասակարգային սլաքարի սրման պայմաններում, յերր ներքին և արտաքին թշնամիները լարում են իրենց բոլոր ուժերը՝ նախապատրաստելով ինտերվենցիա Խորհրդային Միության դեմ:

Հնդամյակի 3-րդ տարին, վորի մեջ մենք թևակոխել ենք, հանդիսանում է ամենամեծական տարին: Համկոմկուսի Կենտկոմի և ԿվՀ-ի գեկտեմբերյան միացյալ

սլենդումը ավեց իր հիմնական դերեկտիվները և ժողովրդական տնտեսության զարգացման 1931 թ. հոկտեմբերը: Այդ դերեկտիվները և թվերի, ինչպես նաև սլենդումի բոլոր վորոշումների հետ յուրաքանչյուր բանվոր և աշխատավոր և ՄՈՊՐ-ի անդամ պետք է ամենամանրամասն կերպով ծանոթանա:

Պլենումը կանդ առավ այն վիթխարի խնդիրների վրա, վորոնք դրված են հնդամյակի 3-րդ տարվա առաջ: Կենսագործելով 3-րդ տարվա ցուցանիշները, դրանով իսկ մեմք հաստատ կապահովեմք հնգամյակի իրագործումը չորս տարում: 1931 թ. հիմնականում մեմք պետք է ավարտեմք մեր յերկրի սոցիալիստական տնտեսության փունդամենտի կառուցումը:

Բերենք մի քանի թվեր, վորոնք կպարզեն մեզ, թե ինչպիսի նվաճումներ ենք ունենալու 1931 թվին: Ժողովրդատնտեսության յեկամուտը հնդամյակի 3-րդ տարում հասնելու յն 49 միլիարդ ո. և այդ այն ժամանակ, յերբ հնդամյակի վերջին տարում ըստ նախադժի մենք ունենալու եյինք 49,7 միլիարդ ո.: 1930 թ. գյուղատնտեսության համայնացրած սեկտորը տալիս էր գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի 28 տոկոսը, իսկ 1931 թ. ապրանքային արտադրանքը կազմելու յն 50 տոկոսից ավելի: Միայն այս փաստը բավական է նշելու համար, թե ինչքան մեծ են այն նվաճումները, վոր ունենալու յենք ընթացիկ տնտեսական տարում:

Արդյունաբերության ասպարիզում մենք արդեն լուծել ենք «ո՛վ ում» խնդիրը: 1931 թ. մենք լուծելու յենք «ո՛վ—ո՛ւմ» պրոբլեմը նաև գյուղատնտեսության ասպարիզում: «Պլանի կատարումը կովեկտիվացման ասպարիզում բացարձակ գերակշռություն կտա սոցիալիստական ելեմենտներին մասնավոր սեկտորի վերաբեր-

վորները հետ: Խորհրդային Միության որինակի վրա նրանք տեսնում են սոցիալիզմի առավելութունները և հանում են այստեղից դատակարգային պայքարի անհրաժեշտ դասեր:

Այս բոլորը պատճառ և հանդիսանում, վորպեսզի կապիտալիստական պետութիւններն եւ ավելի լարված շարունակեն իրենց հակախորհրդային դավերը, եւ ավելի տենդազին կերպով տանեն ինտերվենցիայի նախապատրաստութիւնները: Հոռմի պապի սրբազան և հոգևոր ղեկավարութեամբ կոչ ե արվում խաչակրաց պատերազմի Խորհրդային Միութեան դեմ: Մորիլիզացիայի յեն յենթարկվում Ֆաշիստական, սե հարյուրակային վողջ ուժերը: «Կուլտուրան» փրկելու համար անընդհատի յեն անցել կապիտալիզմի ուղղմական դործարանները:

«Արդշունարեական կուսակցութեան» դատավարութիւնը, ինչպես նաև զանազան հակահեղափոխական խմբակների և վնասարարների հայտաբերումը ապացուցում են իմպերիալիստական Ֆրոնտի տենդազին պատրաստութիւնները հարվածներ իջեցնելու Խորհրդային Միութեան վրա: Դատակարգային թշնամին թե ներսից և թե դրսից ընդհանուր ճակատ ե կազմել սոցիալիզմ կառուցող յերկրի դեմ և վող մի միջոցի առաջ կանգ չի առնում իրականացնելու համար իր նպատակները ինտերվենցիայի նկատմամբ: Խորհրդային Միութեան ներսում կապիտալիստական ելեմենտների մնացորդները կատաղի դիմադրում են սոցիալիստական հարձակմանը: Համաշխարհային իմպերիալիզմը ողտադործում ե այդ դիմադրութիւնը և իր հակահեղափոխական ագենտուրայի միջոցով մեր յերկրում ողնութիւն և ցուց տալիս ներքին հակահեղափո-

խականներին սոցիալիստական շինարարութեանը կռակ-ցնելու, սովը, տնտեսական քայքայումը կազմակերպելու դործում: «Արդշունարեական կուսակցութեան» դատավարութեան ժամանակ Ռաւզինների, Լարիչևների և մյուսների բերանով մերկացվեցին հակահեղափոխականների և իմպերիալիստների ինտերվենցիոն ծրագրերը: Այդ ծրագրերի մասին այժմ զիտե ամբողջ աշխարհը: Իզուր են Պուանկարեն, Բրիանը, և մյուս ինտերվենցիոնիստները հերքում իրենց մասնակցութիւնը և իրենց ոժանդակութիւնը ինտերվենցիայի կազմակերպման դործում: Փաստերը համառ են և անհերքելի:

Այդ փաստերի հանդեպ ավելի ևս բարձրանում ե միջազգային պրոլետարական համերաշխութեան ալիքը և ամրանում պրոլետարական կամքը բոլոր բանվորների սոցիալիստական հայրենիքը վճռապես պաշտպանելու համար:

Ինտերվենցիան շատ թանգ կնստի կապիտալիստների համար:

Հակասութիւնները կապիտալիստական բանակում հասել են ծայրագույն աստիճանի: Տարեցատրի ուժեղանում ե պայքարը յերկու խոշորագույն կապիտալիստական յերկրների՝ Անգլիայի և Միացյալ Նահանգների մեջ: Հետպատերազմյան շրջանում ամերիկյան ապրանքները հաջողութեամբ դուրս են մղում անգլիական ապրանքներին ամերիկյան շուկայից և մրցում են նրանց հետ Հնդկաստանում, Չինաստանում, Ալիստրիայում և Հարավային Աֆրիկայում: Անգլիայի և Միացյալ Նահանգների մեջ կատաղի պայքար ե տեղի ունենում հուլիսի շուկաների համար և առաջին հերթին հումուլթի այնպիսի տեսակների համար, ինչպես նավթն և,

կատուելու և բաժարելու: Միևնույն ժամանակ սրվում է պայքարն այդ յերկուսի մեջ ծովին տիրապետելու համար:

Կապիտալիստական պետությունները գինվում են ամենատենդագին կերպով:

Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի մեջ տեղի յե ունենում պայքար Միջերկրական ծովի համար: Այդ պետություններից ամեն մեկը ձգտում է լիակատար տիրապետություն հաստատել Միջերկրական ծովում: Գերմանական իմպերիալիզմը իր ծրագիրն է կաղմում Անգլիայի և Ֆրանսիայի, Անգլիայի և Միացյալ Նահանգներին մեջ ընկած հակասությունների հիման վրա, վորպեսզի հարկ յեղած դեպքում հնարավորություն ստանա վերանայելու իր սահմանների խնդիրը:

1930 թ. ապրիլի 22-ին Լոնդոնում վերջացավ հինգ պետությունների՝ Անգլիայի, Միացյալ Նահանգների, Ֆապոնիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կոնֆերենցիան, վորը տևեց 92 օր: Այդ յերեք ամսվա պայքարի ընթացքում բացարձակ պարզորոշություն հայտնվեցին իմպերիալիստների մեջ յեղած հակասությունները: Անգլիական «բանվորական» կառավարության միևնույն ժամանակ ցուցաբերեցին նույնքան խորամանկություն և ընդունակություններ, ինչպես նաև մյուս կապիտալիստական յերկրներին դիպլոմատները:

Դա վոչ թե կոնֆերենցիա, այլ մի փորձնական մարզադաշտ էր ռազմական շտաբների համար: Այդպես ելին վորակում կոնֆերենցիայի աշխատանքները հենց իրենք բուրժուական թերթերը: Յեվ իսկապես հետպատերազմյան 35-րդ կոնֆերենցիան վոչ մի քայլ առաջ չարեց գինաթափման ասպարիզում: Սոսկով քաղցր խոսքեր գինաթափության մասին՝ փաստորեն բուրժուական պե-

տությունները մրցում են իրար հետ ասպարիզելու ասպարիզում:

Միացյալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ֆապոնիան 1913 թ. ծախսում ելին 2,3 միլիարդ ռուբ. ռազմամթերքի վրա: 26 թ. այդ դումարը հասավ 5,9 միլիարդի, իսկ 30 թ. 5,7 միլիարդի: Սորհըրդային Միության սահմանակից պետությունները ծախսում ելին 1923 թ. 84 միլ., 1926 թ. 224 միլիոն:

1930 թ. այդ դումարը հասավ մինչև 258 միլիոն վոսկի ռուբլիներով: Հինգ մեծ պետությունների ռաճակում հաշվվում է մինչև 2 միլիոնից ավելի զինվոր: Իմպերիալիստների տրամադրություն տակ գտնվում են նորագույն տեխնիկայի բոլոր նվաճումները: Աճել է տանկերի և ալերպլանների արտադրությունը: Նույնիսկ այժմ, յերբ տեղի յե ունենում չտեսնված համաշխարհային տնտեսական կրիզիսը, յերբ արդյունաբերության առանձին ճյուղերը կրճատվում և փակվում են իրար հետևից, միայն ռազմական արդյունաբերությունն է, վոր գտնվում է ծաղկած դրության մեջ:

Կոմունիստական Ինտերնացիոնալի Դործադիր Կոմիտեյի 10-րդ պլենումը նեց, վոր համաշխարհային բանվորական շարժումը գտնվում է իր հեղափոխական վերելքում: Դա ասացուցվում է այն պայքարով, վոր տեղի ունեցավ Լոճում, Ռուրում, Բոմբեյում, Բերլինի մայիսի 10-րդ պլենումը նեց, վոր համաշխարհային աճող դափոխական վերելքը, վորին համաշխարհային աճող կրիզիսը հակադաս ազդակ է տալիս, ծավալվում է բացառիկ բարենպաստ պայմաններում: Իմպերիալիզմի ռաճակում հակասությունները հասել են ծայր աստիճանի լարվածության: Շուկաների համար տարվող պայքարն այնքան է սրվել, վոր հակադաս հեղքվածքներ

և առաջ բերել իմպերիալիստական ֆրոնտում և ուժեղացրել է ռազմական վտանգի անմիջական սպառնալիքը:

Թերազենահատել պատերազմի վտանգը՝ նշանակում է թերազենահատել և պատիվություն հայտարարել պրոֆետարայան հեղափոխության պատրաստության գործում: Պատերազմի վտանգն անբախտելիորեն կապված է կապիտալիստական ստաբիլիզացիայի անկալունության հետ: Նա անմիջապես կապված է այն բանի հետ, վոր «հողը կապիտալիզմի վտոքի տակ այրվում է» (Ստալին): Պայքարել պատերազմի վտանգի դեմ, նշանակում է պայքարել նրան դեմ, վորպեսզի թույլ չըստալ իմպերիալիզմին նոր յեղբայրասպան պատերազմով թուլացնել պրոլետարական հեղափոխության ընթացքը, թուլացնել հեղափոխության ուժերը:

Սակայն չնայած նրան, վոր իմպերիալիստական բանակում հակասությունները ծայր աստիճան սրվել են, հակախորհրդային ուժերն այժմ ծավալում են չքտեսնված կատաղի պայքար: Այդ աշխատանքը դելիավորում են սոցիալ-ֆաշիստները, սոցիալ-ֆաշիզմին ոգնում են Կոմինտերնից վտարված աշերը և օրոցկիստական ռենեգադները: Պատերազմի վտանգը, վոր աճում է ներկայումս, հանդիսանում է նախ և առաջ կապիտալիզմի քայքայման, դասակարգային պայքարի աճման, իմպերիալիստական ֆրոնտի վճռական օղակներում հայտնաբերվող ճեղքվածքի սպառնալիքի աբգյունք: Բուրժուական բանակը թուլացել է, սոցիալ-ֆաշիզմը կորցրել է իր հեղինակությունը մասսաների մեջ, ավելացել է նրա դերը հակահեղափոխության բանակում: Սրան դուգընթացաբար աճել է կոմունիստա-

կան կուսակցության ուժն ու ազդեցությունը: Սրանումն է կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող դասակարգային ուժերի վերախմբավորման հիմնական հանրադրումը:

Առաջավոր յերկրները պրոլետարիատի հեղափոխական շարժումը ձուլվում է և միանում է խոշոր գյուղացիական և գաղութային յերկրների հեղափոխական վերելքի հետ: Սրանումն է հենց համաշխարհային պրոլետարական հեղափոխության շարժիչ ուժերի միաձուլումը, վորն ամենից հաստատուն կերպով ապահովում է հեղափոխության հաղթանակը:

Պրոլետարիատի դիկտատուրա կամ բուրժուազիայի դիկտատուրա, սոցիալիզմ կամ կապիտալիզմ, ահա այն հիմնական խնդիրը, վորը դառնում է պրոլետարական պայքարի հիմնական առանցքը:

Բանվորի ամենորյա ամենակենսական շահերը մղում են պրոլետարիատին դեպի իշխանության խնդրի սրակտիկ հեղափոխական դրվածքը: Կապիտալիզմը վոչ միայն չի բավարարում նրա ամենորյա պահանջները, այլև կատաղի պայքար է տանում այն համեստ նվաճումների դեմ, վորոնք պրոլետարիատն ունեցել է անցյալում: Միլիոնավոր պրոլետարներ արտադրությունից դուրս են շարվում փողոց: Գործազուրկությունն ամենուրեք կատաղի կերպով աճում է: Գործազուրկներին վիճակված է սովամահ դրություն: Արտադրության մեջ մնացած ֆիլիոնավոր բանվորները յենթարկվում են կապիտալիստական ռադիոնալիզացիայի կատաղի ճնշմանը, աշխատում են գերմարդկային լարվածությամբ:

Պրոլետարիատն իր ամենորյա պայքարում գրոհում է կապիտալիստական հասարակակարգի հիմքերը:

Հեղափոխական ուժերի ղինված ջախջախումը հանդիսանում է այժմ բուրժուազիայի ամենահիմնական խնդիրը: Բուրժուազիայի և պրոլետարիատի մեջ տեղի ունեցող քաղաքական կռիվը արտահայտվում է ղինված միջադեպերում, բանվորների ղնդակահարության, բանտարկությունների ձևով: Դասակարգային պայքարի բնույթն արդեն պարզորոշ կերպով ցույց է տալիս, վոր հասունացել են հեղափոխական կրիզիսի սուրյեկտիվ պայմանները: Պրոլետարական մասսաները ամենամեծ վստահությունն են տածում դեպի կոմունիստական կուսակցությունը, պայքարում են նրա մարտական դրոշի տակ: Պրալետարական պայքարը դուրս է յեկել փառք բաց ասպարեզ, այս ձևը դառնում է պայքարի հիմնական ձևը, վորով և բնորոշվում է պրալետարիատի տրամադրությունը: Տնտեսական և քաղաքական գործադուլի միաձուլումը հեղափոխական ղեմոնստրացիաների հետ—սա յե պայքարի այն ձևը, վորն առաջադրվում է այժմ մասսայական հեղափոխական շարժումը: Պրոլետարական պայքարի այդ ձևը վորոշում է հեղափոխական վերելքի աստիճանը և ստանում է խոշոր ազդակ համաշխարհային տնտեսական ճգնաժամի աճույնից և խորացումից:

Հաճախակի բազմամարդ հեղափոխական մասսայական ղեմոնստրացիան դասակարգային պայքարի այն բարձր ձևն է, վորը ծավալվեց 1930 թ. մայիսմեկն ղեմոնստրացիաներից հետո և վորով պրոլետարիատի դասակարգային պայքարը բարձրացվեց նոր՝ ավելի բարձր աստիճանի վրա:

Պայքարի այդ ձևը վորոշվում է նաև աճող դերով, վոր ստանում է գործադուլների շարժումը:

Կապիտալիստական յերկրներում գործադուլները թիվն այժմ հասնում է 30 միլիոնի: Հենց գործադուլության մեջ ամենից ցայտուն և սուր կերպով դրսևորվում է այն հսկայական հակասությունը, վոր գոյություն ունի մի կողմից հասարակական աշխատանքի արտադրական ուժի ղարգացման և մյուս կողմից նրան կապանքներում պահող կապիտալիստական սեփականատիրական հարաբերությունների մեջ: Գործադուլությունը քայքայում է կապիտալիզմը, նրա հիմքերը, նրա ամբողջ տնտեսավարական սիստեմը: Գործադուլության աճումը թերահավատությամբ է լցնում մասսաները դեպի կապիտալիզմը, բարձրացնում է այդ մասսաները կապիտալիզմի դեմ: Բավական է այստեղ բերել մի քանի տալիզմի դեմ: Բավական է այստեղ բերել մի քանի թվեր, վորոնք կապացուցեն, թե ինչ խոշոր չափով այժմ տարածվել է գործադուլությունը: Լեհաստանում յերեք աշխատողին և Դերմանիայում յուրաքանչյուր 4 աշխատողին ընկնում է մեկ գործադուլը, չհաշվելով նրանց, ովքեր աշխատում են վոչ լրիվ բանվորական ուր: Սա նշանակում է, վոր յուրաքանչյուր ընտանիք գրտնելվում է գործադուլության սպառնալիքի տակ: Ավելի վատթար դրություն կստեղծվի ընթացիկ 1931 թ., յիրը հղնաժամն ավելի կխորանա: Պայքարը գործադուլության դեմ հանդիսանում է յեկակետ մորիլիզացիայի յենթարկելու մասսաները կապիտալիզմի դեմ:

Գործադուլությունը խաղում է հսկայական հեղափոխական դեր: Գործադուլները հաղարներով հանդես են դալիս հեղափոխական առաջավոր դերքերում: Բուրեն դալիս հեղափոխական առաջավոր դերքերում: Բուրեն ժուաղիայի և սոցիալ-ֆաշիզմի քաղաքականությունը կայանում է նրանում, վորպեսզի գործադուլները շարժումը առանձնացնել արտադուլության մեջ գրաղված

բանվորների շարժումից և հակադրել գործադուրկների շարժումը արտադրության մեջ զբաղված բանվորների շարժումին:

ՄՈԴՐԸ ՄՊԻՏԱԿ ՏԵՐՐՈՐԻ ԴԵՄ

Բոլոր միջոցներով պայքարում է կապիտալիստական պետությունը հեղափոխական բանվորական շարժման դեմ: «Կարգ ու կանոն» հաստատող վոստիկանական մեքենան «ազդեցիկ» լինելու համար ոգտվում է ուետինն փայտերով և մահակներով մինչև գնդացիները արագաչարժ դրահապատ ավտոմոբիլները և ինքնաթիռները: Կապիտալիստական սեփականությունը պետք է ապահովված լինի բայլշեփիկյան վտանգից և այս պատճառով բանտերը լցված են հաղարավոր հեղափոխականներով, կապիտալիստական աքսորներում տառապում են նրանք, ովքեր համարձակվել են ուղղել ապստամբության խոսքը մասսաներին:

ՄՊԻՏԱԿ ՏԵՐՐՈՐԸ ԱՐՇԱՎՈՒՄ Ե ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆՐՈՒՄ

1929 թվի ընթացքում կապիտալի 73 յերկրներում վոստիկանություն հետ տեղի ունեցած հեղափոխական միջադեպերի ժամանակ սպանվել են 94.498 մարդ: Վերալիորվել են 31.984 մարդ, բանտարկված են յեղել 21.578 մարդ, աքսորված 650 մարդ: Կատարվել են 56.564 խուզարկություններ, արգելված են յեղել 1.541 ժողով: Սրանք, իհարկե, պաշտոնական թվեր են, վորոնք հետո յեն իրականությունից և տալիս են միայն մոտավոր պատկերը:

Բայց չե՞ վոր որինավոր միջոցներից բացի բուրժուազիան դործադրում է նաև ուրիշ միջոցներ հեղափոխականներին հալածելու համար: 1929 թ. ընթաց-

քում կապիտալի 50 յերկրներում կազմակերպված է յեղել 1.085 պրոցես և դատապարտվել է ընդամենը 8.916 մարդ, վորոնցից մահվան պատժի յեն դատապարտվել 2.322 մարդ: Մնացածները ստացել են ավելի նվազ պատիժներ՝ ընդհանուր ամամբ 12.412 տարի ազատազրկություն: Բայց ընկնելով կապիտալիստական բանտը, ներկայիս պայմաններում դա նշանակում է հարատև կերպով մնալ չորս պատերի մեջ, դառնալ ամենալիտի բանտապետների զոհ: Իդուր չե, վոր հենց այդ տարվա ընթացքում սննդադուլի կորագիծը խիստ կերպով բարձրացել էր վելք և հասել 118-ի: Այդ սննդադուլներում մասնակցում էյին 9212 բանտարկյալներ, վորոնք միջին հաշվով սոված են մնացել 40.000 որից ավել: Բուրժուական և վոչ մի սահմանադրություն մամուլի «ազատության» մասին յեղած որենքները, խոսքի, միությունների «ազատությունը» չեն ապահովում հեղափոխական պրոլետարներին կապիտալիստական անասելի շահագործումից:

Բուրժուազիան ամենալայն կերպով ոգտադործում է Լինչի դատը իր դասակարգային շահերը պաշտպանելու համար: Բավական է ասել, վոր Ամերիկայում կես դարի ընթացքում Լինչի դատից զոհ են գնացել 40.000-ից ավելի նեգրեր: 1930 թ. 1-ին կիսամյակում Լինչի դատին են արժանացել 29 սևամորթներ:

Լինչի դատը դասակարգային պայքարի ամենաուրբ գեմֆերից մեկն է: Բավական է պլանտատորին և նուրբ գեմֆերից մեկն է: Բավական է պլանտատորին և կամ թե ձեռնարկատիրոջը մեղադրել վորեև սևամորթի նրանում, վոր նա անպատվել է սպիտակ կնոջը, վոր պետղի այդ սևամորթի ընկալում լինի: Սևամորթը միշտ գտնվում է Լինչի դատի մպտնալիքի տակ:

Բայց վոչ միայն դրա համար և Լինչի դատը: Մի-
ևնույն ժամանակ նա պառակտում է մտցնում աշխատա-
վորների միասնական Ֆրոնտի մեջ: Բորբոքելով ցեղա-
յին ատելությունը, սպիտակ բանվորին դուրս բերելով
սևամորթների դեմ և միևնույն ժամանակ ոգտադործե-
լով վերջիններիս խղճալի դրությունը՝ բուրժուազիան
ձգտում է խանդարելու ամերիկյան պրոլետարիատի
համախմբումը, խափանելու դասակարգային համե-
րաշխության իրականացման գործը: Լինչի դատը մի-
ևնույն ժամանակ միջոց է հանդիսանում բարոյապես
լքելու սպիտակ բանվորներին, վորոնց այնպիսի միտք
և պատվաստվում, թե նրանք, չնայած իրենց ճնշված
դրությունը՝ համենայն դեպս պատկանում են
բարձրագույն ցեղին: Նման քաղաքականությունը գոր-
ծադրվում է բոլոր բուրժուական պետությունների կող-
մից: Ռուսաստանում ցարական ժամանակներում ատե-
լություն եր սերմանվում վելիկոռուսական ազգաբնա-
կության և ազգային փոքրամասնությունների միջև:
Անգլիական կառավարությունը տարբերություն է դը-
նում հնդիկներին և մահադեականների միջև Հնդկաստա-
նում: Լեհական կառավարությունը ատելություն է
ներշնչում լեհերի և ուկրաինացիների միջև: Ամերիկյան
կապիտալիզմը ատելություն է սերմանում պրոլետա-
րիատի մեջ դեպի սևամորթները:

Լինչի դատի գործունեությունը աշխուժանում է
առանձնապես տնտեսական ճգնաժամների ընթացքում,
յերբ հարկավոր է յեղք գտնել աշխատավորների դժգո-
հության համար: Պատահական չե, վոր այժմ խոշորա-
գույն համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամա-

նակ կազմակերպվում են հատուկ կողմնակիցներ, վո-
րանք իրենց անվանում են «սև շապիկների ուղեկ»:

Վերջին ժամանակներս Լինչի դատը գործադրվում
է նաև սպիտակ բանվորների դեմ: Ֆաշիստական ամ-
բոխը հարձակվում է բանվորական հեղափոխական աշ-
խատավորների վրա: Մեր բոլորիս հիշողության մեջ
թարմ են հեղափոխական պրոֆմիությունների գործիչ-
ների սպանությունները, թարմ է նաև Ելլա Վիկինսի՝
Գաստոնիայի այցը մանածագործուհիների այդ մար-
տական կազմակերպչի սպանությունը: Դա, իհարկե,
վոչնչով պակաս չէ Լինչի դատից: Ամերիկյան ռեֆոր-
միստները վոչ միայն չեն պայքարում Լինչի դատի
դեմ, այլ հենց իրենք են խրախուսում այդպիսիները:
Բավական է ասել, վոր մի շարք միություններ չեն ըն-
դունում իրենց կազմակերպությունների մեջ սևա-
մորթներին:

Դրությունը կապիտալիստական բանտերում նկա-
րագրելու համար խոսքը տալիս ենք նրանց, ովքեր
յերկար ժամանակ տառապել են այնտեղ հեղափո-
խական պայքար մղելու համար: Ահա թե ինչպես է
նկարագրում ընկ. Մ. ՆՈՎԱԿԸ լեհական բանտի նիստ
ու կացը:

«Մենք 27 հոգի յենք և բաժանված ենք յերկու
խմբակի: Թեև մեծ դժվարություններ, բայց մեղ հաջող-
վում է կապ պահել իրար հետ: Բանտում հաստատված
է ամենաանխմաստ ռեժիմ: Սրգելվում է բարձր խո-
սել, ունենալ ավելորդ գույք սպիտակեղեն կամ հա-
գուստ, ուտել վոչ նշանակված ժամին, փոխանակվել
գրքերով: Զի թույլատրվում նաև խոսել ղրոսանքների

ժամանակ կամ թե չե պետք է խոսել բարձր, ծանոթ-
ների և բարեկամների հետ տեսակցելիս և այլն: Կա-
մերան (սենյակը), վորտեղ նստած ենք յերեք հոգի,
յերկարությամբ 6 քայլ, իսկ լայնությամբ 4: Առա-
տաղը ցածր է, ափսոս, վոր ողը չի բալում նույն իսկ
այժմ ձմեռ ժամանակ: Փողը լուսամուտը կտար բա-
վականին լույս, բայց նա գրեթե ամբողջովին ծած-
կւմած է թիթեղով, ափսոս վոր նույնիսկ ամենա-
պարզ և լուսառատ որերը դժվար է կարդալ. կամ պո-
րապէլ: Յերեկոյան, շատ աղոտ է լուսավորում ա-
ռաստաղի վրա ամրացրած ելեկտրական լույսը, այն-
պես վոր կարելի չէ կարդալ միայն կանգնած դրո-
թյամբ:

Չգիտեմ ինչ ասեմ մեր ուտելիքի մասին: Ով ինքը
չի ճաշակելու հայտնի դառած «պավիաքյան» ճաշե-
րից, նրան դժվար է պատկերացնել, ինչպէս և դժվար
է հասկացնել, թե ինչքան այդ ճաշը զգվելի և անտա-
նելի յն: Յուղի նշույլ անգամ չկա կերակրի մեջ:

Տալիս են 400 գրամ սև, վատ թխված հաց, մեկ
ու կես կամ 2 լիտր ջրալի կերակուր, վորտեղ լողում
են կաղամբի մի քանի կտորներ: Ստաժավոր բան-
տարկյալները պատմում են, վոր յերբ նրանք գան-
գատվեցին կերակրի վատորակութեան մասին, բանտի
պետ Յանկովսկին պատասխանեց նրանց.

— Դուք մոռանում եք, վոր գտնվում եք բան-
տում և վոչ թե սանատորիայում կամ պանսիոնում:
Դուք բանտարկյալներ եք և վոչ թե պանսիոններ:

Այդ Յանկովսկին ցարական ժամանակ Իրկուտսկում
յեղել է բանտապետ և լեհաստան է վերադարձել բան-
դիտ լեդիոնների հետ միասին: Կանանց բաժանմունքի

պետը հանդիսանում է նույնչափ հայտնի տիկին
Ջդանովսկայան, վորը լեհական «սոցիալիստական»
կուսակցութեան անդամ է և դրանով չափազանց հպար-
տանում է:

Բանալից դուրս՝ աղատութեան մեջ յես շատ եյի
լսել նրա դադանութեանները, սաղիզմի և բռնու-
թեանները մասին, վորոնք արժանի յեն հին ցարական
ժանդարմին: Անգամ թվում եր, վոր այդ պատմվածք-
ներում կա վորոշ չափազանցութեան: Բայց բավական
եր փոքր ժամանակ անցկացնել կանանց բաժանմուն-
քում և յես արդեն համոզվեցի, վոր Ջդանովսկայայի
լիտիութեան և սոցիալիստական մասին դժվար է չափա-
զանցնել:

Յեթե Ջդանովսկայան միայն դեպի կոմունիստե-
րիս վերաբերվեր ատելութեամբ և չարախնդութեամբ,
դա դեռ հասկանալի յեր: Բայց նա նույնպիսի դահիճ
է հանդիսանում միանգամայն անպաշտպան և անպա-
տասխան մյուս բանտարկյալների վերաբերմամբ և
ինչքան ուժեղ է լինում մեր հակահարվածը, այնքան
ուժեղանում են նրա բռնութեանները վերջիններիս վե-
րաբերմամբ:

Մեկ անգամ նա ասաց մեզ հետեյալը.

— Ինչքան ել ուժեղ լինի ձեր կողմից ցուցաբեր-
վող դիմադրութեանը, գիտեք, վոր յես բավականին
համբերութեամբ և ուժ կունենամ, վորպէսզի կարողա-
նամ հաղթահարել նրան՝ չդիմելով ֆիզիկական ճնշա-
նը: Իսկ յես ունեմ դրա լրիվ իրավունքը և բացի դրա-
նից իմ արամադրութեան տակ է գտնվում մութ կար-
ցերը և «հանգստացնող շաւիկը»:

Նա ամեն տեսակի հնարագիտություն է դիմում, վորպեսզի ճնշի մեզ: Բայց մեր կողմից այդ սոցիալիստեր միշտ էլ ստանում է միահամուռ և վճռական հակահարված: Նա ստիպված է սահմանափակվել փոքրիկ ստորություններով, վորոնք թունավորում են մեր կյանքը և ամենուրյա անընդհատ պայքարի շնորհիվ չափազանց լարված ներվային դրություն մեջ են պահում մեզ բոլորիս:՝

«Իմացեք, սիրելիներս, —ասում է ընկ. Նովակը,— վոր մեզ հեղափոխականներն համար պայքարը չի վերջանում և վոչ մի բոլոքով նաև բանտի պատեցի հետևը: Ընդհակառակն նա այստեղ ավելի կատաղի բնույթ է ստանում, վորովհետև մենք դառնում ենք ամբողջովին թշնամու իշխանություն ներքո»:

Ահա և մեկ նկարագրություն, վորը վերաբերում է Բելաստոկի բանտում յեղած դրությունը:

«Մեզ բերեցին այստեղ նոյեմբերի 5-ին, չափկների և վոստիկանների ուժեղացրած հսկողության տակ բանտարկյալների վազոններով:

Մեծ, մռայլ և կեղտոտ բանտի շենքը շատ ծանր տպավորություն թողեց մեզ վրա: Այստեղ կան 200-ից ավելի քաղաքական բանտարկյալներ: Ռեժիմն անտանելի յե, թեև չեն նկատվում առանձին խմբանշներ: Յերեվի այն պարզ պատճառով, վոր այստեղի բանտապետները ժամանակ չունեն դրանով զբաղվելու: Փոքրից մինչև մեծը նրանք անընդհատ զբաղված են հարբեցողությամբ և գողություն: Իհարկե գողանում են բանտարկյալների իրերը:

Բանտարկյալների ընդհանուր թիվը 2000-ի չափ է: Վերաբերմունքը մեզ հետ գազանորեն կոպիտ է: Բավա-

կան և նույնիսկ փոքր չափով խախտել կանոններից մեկը և արդեն վոչ միայն կարգեր են ուղարկում, այլև պարզապես ծեծում են: Առանձնապես կոպիտ են վերաբերվում կանանց հետ: Այս հանգամանքը ընկերներին հաճախակի բողոքների պատճառ է հանդիսանում և վերջանում է ծեծով:

Կամերաներում և նախասենյակներում կեղտոտ է և սոսկալի հոտ է կանգնած: Ամեն տեղ կեղտ է: Սնկոդինները սեփացել են կեղտից: Կեղտոտ է և կերակուրը: Հացը խառն է ավազով: Յերբ վոր մենք դանդաղեցինք բանտապետին այդ կեղտի մասին, նա պատասխանեց, վոր նա բանտ է պահում և վոչ թե հյուրանոց:

Առանձնապես ծանր է հիվանդների դրությունը, վորոնց թվին այստեղ՝ քաղաքական հանցավորների մոտ՝ 50-ի յե հասնում: Բժշկական ոգնություն գրեթե մոտ՝ հասցվում: Հիվանդները չարաթներով մնում են աչի հասցվում: Հիվանդները չարաթներով մնում են աչի հասցվում: Զուբերկուլյովով հիվանդները չարաթներով մնում են ընդհանուր կամերաներում բարձր ջիււմության մեջ:

Մեծը հանդիսանում է մի ընդհանուր սիստեմ: Բելաստոկի բանտը սրանով հայտնի յե ամբողջ Լեհաստանում, իսկ բանտի հսկիչ պրոկուրոր Չիբուլևիչը նույնիսկ չի յել ձեմացնում, վոր պաշտպանում է ծեծություններին: Ընդհակառակը նա ասում է բացահայտորեն.

— Դուք միաստակար ելեմենտներ եք լեհական պեություն համար և ավելի լավ վերաբերմունքը չեք արդարացնի:

Մեր գալուց մի քանի որ առաջ կարցերում սպանվեց ընկ. Ադոլֆ Ռայխմանը: Չնայած բոլոր քաղաքական

բանտարկյալների ամենասուր բողոքներին և սննդա-
դեղին, ընկ. Ռայխմանի մահվան խնկական պատճառ-
ները հաստատելու համար բանտի բժիշկը վկայական
տվեց, վոր մահը հետեւումը եր ուրտի պայթյունի։
Ապանվածին թաղեցին դիշերը ընկերներից և բարե-
կամեններից դադարեց։

Մենք գիտենք, վոր մեր սառապանքներին աշտեղ
վերջ չկա, բայց մենք մեզ պինդ ենք պահում, վորով-
հետեւ շուտով մեր դատն ե և վորքուքի լինել վաչ վոր
չի ցանկանում»։

Դրուեթյունն ավելի վատ ե հնդկական բանտերում։
Այստեղ մենք կրեքենք Սիտապուրի բանտի նկարագրու-
թյունը, վորը տալիս ե ընկ. Դանգեն։

«Սիտապուրի բանտում իմ յերկարատե կեցության
ժամանակ յես շատ բան եմ լսել ու տեսել։ Յես ինքս
ստուգել ե ճշտել եմ այդ լուրերը, կատարել եմ օն-
իական նկատողություններ, և ահա այն հետեւու-
թյունները, վորոնք կարելի յե անել իմ կողմից հավա-
ված փաստերից։

Ամենամեծ նշանակությունն ունի բանտի մեջ խոհա-
նոցը։ Խոհանոցից ե կախված բանտարկյալների ամ-
բողջ կյանքը։ Բայց ավելի ևս կարեւոր ե նա բանտի
վարչության համար, վոր թերեմա առաջին հայացքից
դժվար հասկանալի լինի։ Թե ինչպես են կերակրվում
բանտարկյալները, այդ մասին ճշգրիտ վոչ վորք չգիտի։
Յեմ այդ մասին դժվար ե մի բան իմանալ, քանի վոր
բանտը կղզիացած ե ամբողջ աշխարհից, փակ ե ար-
տաքին աշխարհի համար։ Բանտը խիստ կերպով պա-
հում ե իր դադարները, դրան պետք ե ավելացնել
նաև այն, վոր վոչ մի բանտարկյալ ընդհանրապես չի
համարձակվի ճշմարտությունն ասել, թեկուզ այն

դեպքում, յերբ այդ մասին նրան կհարցնի բոլորովին
պատահական կողմնակի մարդ։ Բայց այն, ինչ վոր յես
այժմ կպատմեմ, միանգամայն ստուգված տվյալներ են
բանտային կյանքի մասին։

Ժամանակ առ ժամանակ բանտը հաճախվում ե
վոչ պաշտոնական անձանց կողմից, թեև պետք ե ասեմ,
վոր այդպիսիները շատ հազվադեպ են։ Իմ յերկա-
րատեմ կեցության ժամանակ յես տեսել եմ ընդամե-
նը 3 կամ 4 նման հաճախորդների։ Յեմ հաճախորդնե-
րի սակավության գլխավոր պատճառն այն ե, վոր
նրանք նույնիսկ իրենց ցանկության դեպքում համարյա
վոչնչով չեն կարող ողնել բանտարկյալներին։ Նրանք
չեն կարող պարզել իրերի իսկական դրուեթյունը։ Յեմ
յեթե հարցեր ել տալիս են, բանտարկյալները, միևնույն
ե, չեն պատասխանում, չեն ասում ճշմարտությունը՝
պատժված չլինելու համար։ Սակայն լինում են նաև
«բացառություններ»։

1925 թ. դեկտեմբերի 27-ին Կադի Հաբիբ Աչրաֆը՝
օրենսդրական խորհրդի անդամ՝ հաճախեց մեր բան-
տը։ Իր նկատողության մեջ, վոր նա գրեց վոչ պաշտո-
նական հաճախորդների գրքում, մենք կկարդանք հե-
տեւյալը.

«Յես յեղա խոհանոցում, անցկացրի այնտեղ վորոչ
ժամանակ և տեսա կերակրի պատրաստությունները։
Մաքրությունը տիրում եր ամենուրեք։ Յես ճաշակե-
ցի հացից մի կտոր և այնտեղ գտա վորոչ քանակու-
թյամբ ավաղ։ Պետք ե ավելի մաքուր հաց քսել»։

Այս նկատողությունը հարկավոր ե պարզաբանել
պատշաճ կերպով։ Պարոն Աչրաֆը դրում եր մի բանտի
մասին, վորի բանտապետը նշանավոր մարդ ե համար-
վում քաղաքի հասարակական շրջաններում։ Բայց դրա-

նից, պարոն Աշրաֆը, վորպես խորամանկ իրավաբան, կարողանում եր նուրբ կերպով արտահայտել իր միտքը: Այնպես, վոր յեթե նա ասում ե, վոր հացի վորակը անբավարար եր և նա մաքուր չեր թխվում, դա պետք ե հասկանալ այն իմաստով, վոր գիտնական իրավաբանը հացը գտել ե միանգամայն անտանելի: Բացի դրանից, ընթերցողներն արդեն նկատեցին, վոր նա մի կողմից խոսում ե ամենուրեք տիրող ընդհանուր մարքության մասին և մյուս կողմից հացի անմաքուր լինելու մասին:

Յեվ մենք ստիպված ենք ուտել այդ հացը, վորովհետեւ հրաժարվելու դեպքում կենթարկվենք ծեծի և այնպիսի խստությունների, վորոնք նկարագրել անգամ դժվար ե:

Յուրաքանչյուր բանտարկյալ ստանում ե 18 չիտակ (16 չիտակը հավասար ե մի կիլոյի) թխված հաց: Սակայն բանտի վարչությունը դիմում ե ամեն տեսակ խորամանկությունների, վորպեսզի կարողանա չահել այս գործում: Այլուրին այնքան ջուր են խառնում, վորպեսզի նա լրացնի պակասը, վոր գնում ե վարչության ոգտին: Այսպիսով յուրաքանչյուր բանտարկյալի նորմայից նրանք չահում են վորոշ քանակությամբ ալյուր, — ասենք մի չիտակ:

Սխտապուրի բանտում միջին հաշվով լինում են 700 բանտարկյալ, այնպես, վոր այստեղից հազդին ոգուտ ե ստանում բանտի վարչությունը:

Մանր-մուկ պաշտոնյաները ամենասոսկալի վերաբերմունքն ունեն բանտարկյալների հետ: Շատ անգամ բռնություն ե գործադրվում բանտարկյալի վերաբերյալ, վորպեսզի նրանից փող պոկեն: Այս գծով մարդիկ հասել են հսկայական վարպետության:

Յերբ բանտարկյալը առաջին անգամ ընկնում ե լանվորական ջոկատի մեջ, նա իսկույն ևեթ նշանակվում ե աշխատելու ջրաղացի վրա: 100-ից 99 դեպքում բանտարկյալը չի կարողանում աղալ իրեն վորոշված չափը: Այս դեպքում նրա հետ վերաբերվում են ամենադաժան կերպով: Նախ և առաջ բանտարկյալին «աշխուժացնում են»: Յուրաքանչյուր 10—15 րոպեից լանտարկյալին մոտենում ե հսկիչը և հարվածներ ե հասցընում նրան, վորպեսզի «աշխուժացնի» և ստիպի աղալու իր չափը: Սպառնալիքներին վերջ չկա, ծեծն անընդհատ ե: Յերեկվա ժամի 4-ին նրան տանում են գըլխավոր հսկիչի մոտ, վորը հրամայում ե «աշխուժացնել» բանտարկյալին արդեն ինչպես հարկն ե: Նրան նորից յենթարկում են ծեծի այնպես, վոր բանտարկյալի վողջ մարմինը անտանելի կերպով ցավում ե:

— Ունե՞ս դու բարեկամներ, — հարցնում ե հըսկիչը:

Խեղճ զոհը հիշում ե կնոջը, յերեխաներին, գաւաւմյալ ծնողներին:

— Կանչի՛ր նրանց տեսակցության:

Բանտարկյալը չի հասկանում: Նրա ընկերը, վորն ալելի վորձված ե, հասկացնում ե նրան:

— Ախր կանչի՛ր քո բարեկամներից վորեւե մեկին տեսակցության և մի բան տուր ջամադարին (հսկիչին): Այն ժամանակ գրությունդ կյաւանա: Ջամադարը հրաւալի մարդ ե:

Հետեւյալ որը նոր հեղնանքներ: Յեթե զոհը հաջող կերպով կարողանում ե կատարել իրեն հանձնված աշխատանքը, ձեռք են առնվում ուրիշ միջոցներ: Յերբ նա մի րոպեյով թողնում ե ջրաղացը և գնում ե ջուր խմելու կամ թե չե արտաքնոցը, գողանում են նրա ալ-

յուրեղց կամ Թե, ալյուրին ցելօ են խառնուած: Պէտ նուայն-
խակ չի յել կասկածուած այս բանի մասին: Խեղճն կար-
ծում է, վոր վերջացրել է իր աշխատանքը և զնում է
պահեստ, վորպէսզի հանճնի հացահատիկը: Այնտեղ
նրան հեգնում են.

—Այս ի՞նչ է, դու ալյուրն ել եռ ուտում: Ի՞նչ է, քեզ չի՞ բավարարում քո ստացած հացը:

Նորից աշխուժացնում են նրան: Խժբծանքներն ա-
ճում են և շատանում: Բազմական է մի փոքր շփոթվել,
և հարվածները տեղում են: Վերջապես կյանքը դառ-
նում է անտանելի:

Փորձված մարդիկ խորհուրդ են տալիս հետևյալ,
տրադիցիային, վրդի մեջ և միակ վերկույթյունը: Այլը-
ստացում և առնվառնություն:

«Չորս անհամ» :

—Վոչ, յես պետք է ստանան վոչ պակաս ռուպլիտ-
յեց:

Եղեղ՝ բանտարկյալը փորձում է հակաճառել ասու-
լով, Վոր աղբւան չի կարող տալ : Վերջապես կնքվում
է համաձայնութիւն — վեց աննա : Մի վորէն դրազեւո
բանտարկյալ դրում է նամակ բարեկամներին, վորպես-
զի նրանք դան տեսակցութիւն :

Կինը դալիս է: Բանտապետը նրանից ստանում է մի ռուպիա և հեռանում: Կինը սպասում է տեսակցության, բայց, իհարկե, տեսակցությունը չի կայանում: Բանտարկյալին հայտնում են, վրո կինը վճիճն է ցավեց: Նորից հարվածներ, և բանտարկյալը գլորվում է ցած:

Վերոհիշյալ ևն այս սխառութի հետեւյալնքները :

Բանտի ռեժիմը վրմանց դարձնում է հյու հայա-

տակներ, իսկ մյուսներին էլ կատաղեցնում է գողա-
ղեցնում է :

Այստեղ յետ կնկարագրեմ ծեկ հսկիչի, վորն առանձնապէս աչքի յեր ընկնում իր բռնութեաններով։ Նրա առաջին հրամանն այն մասին եր, վորպեսզի բանտարկյալներից վաշվո՛ք չհամարձակվի գանգատվել։ Նրանք, ուղբեր հաճառակ դրան կգանդատվէին, ստանում եյին 300 հարված։ Մի խոսքով բանտարկյալները յերբեք այսպիսի տառապանքներ չէին կրել, նրանք չէին համարձակվում գանդատվել բանտապետին։

տին :
1926 թ. մայիսի 25-ին բանտարկյալներին մեկը՝
Հուսեյրն անունով, կանչվեց հակիճների կողմից : Նրան
հայտարարեցին, վրո նա չի կատարել իր աշխատանքն
ամբողջութամբ : Հուսեյրինը հավաստիացում էր, վրո
մյուս անգամ նա այդ կանի : Սակայն հակիճները խուս-
մանացին : Նրան հասցրին 200 հարված և ծեծեցին փայ-
տերով :

[illegible]

Դրուժյունը :
Նրանք կազմեցին մի ծրագիր, վորի հաջողության

հետեւիւնքով բանտարկյալը կստանար լրացուցիչ յերկու տարվա ազատազրկութիւն և ընդմիջո կմոռանար գտնագտնվելու մասին: Ծրագիրը կայանում էր նրանում, վորպեսզի սղոցել բանտարկյալի լուսամուտի յերկաթյա լարը և դրանով մեղադրել նրան փախուստի մեջ: Այս բանը պետք է կատարեր այն պահակը, վորը ներկա յեր գտնվում ծեծի ժամանակ: Բանտարկյալներին դուրս հանեցին բարակից և փակեցին արհեստանոցում և ջրաղացի մեջ: Լուսամուտները ծածկեցին վերմակներով:

Յեւ ահա ցերեկվա ժամի 2-ին հանկարծակի կերպով յեկան ստուգելու լուսամուտները: Իհարկե դուռն, վոր Հուսեյինի մոտ գտնվող լուսամուտի յերկաթյա լարը սղոցված է: Անմիջապէս տեղեկութիւն ուղարկեցին բանտի պետին: Վերջինս յեկավ և իսկապէս տեսավ սղոցված լարը: Նորից քննութիւն: Կարծես թէ ծրագիրը հաջողվեց: Գիշերապահին սովորեցրել էյին, թէ ինչպիսի ցուցմունքներ պիտի տալ: Մյուս հսկիչները հաղորդեցին այն մասին, վոր բանտարկյալի մոտ սղոց է գտնվել: Բանտարկյալները գտնվում էյին սարսուխի մեջ, յերբ իմացան այդ բոլորը:

Բայց ինչպէս կարելի յեր ճշմարտութիւնը հասցնել բանտապետին, ո՞վ կհամարձակվեր ասել ճշմարտութիւնը: Բարեբախտաբար ծեծի յենթարկելու ժամ տարկյալը յեկավ ինձ մոտ և խորհուրդ էր հարցնում: Յես խորհուրդ տվեցի առանց վախի պատմել ամբողջ ճշտութիւնը: Նա համարձակ մարդ էր: Բանտապետին նա պատմեց ամբողջ ճշտութիւնը նախորդ ասելով, վոր այդ բոլորը նա կպատմի, յեթէ նրան պաշտպանութիւն խոստանա հսկիչից: Սա մի աղջանջան էր և բոլորի լեզուները բացվեցին: Մեկը մյուսի հետեւից

դուրս էյին գալիս բանտարկյալները և պատմում իրողութիւնը: Կարծես թէ պետք է հաստատվեր ճշտութիւնը: Բանտապետը քննութիւն բոլոր արդիւնքները ուղարկեց գլխավոր ինսպեկտորին: Սակայն այն, ինչ վոր սպասում էյին, չարգարացավ. գլխավոր ինսպեկտորը (հսկիչը) մի յեզրակացութիւն հանեց, վորտեղ վոր չինչ չեր կարելի հասկանալ: Նա գտնվում էր դժվար դրութիւն մեջ, քանի վոր յեթէ միջոցներ ձեռք առնվէին մեղավոր հսկիչի և նրա ողնականի վերաբերմամբ, դա կվիրավորեր բանտի ամբողջ վարչութիւնը: Այս պատճառով եւ գլխավոր հսկիչը բավարարից նրանով, վոր կասկածի տակ առավ բանտարկյալներին ամբողջ ցուցմունքները այն պատրվակով, վոր նրանք բանտարկյալներ են: Մյուս կողմից նա հավատ չընծայեց և պահակներին ցուցմունքներին: Հսկիչի և նրա ողնականի վերաբերմամբ գլխավոր հսկիչը բավարարվեց միայն հանդիմանութեամբ: Այսպիսով վերջացավ այդ պատմութիւնը:

